ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ

0009, ք.Երևան, Կորյուն 15/1, Հեռ: (00374 10) 511-771 www.court.am

ԴԴ-1 Ե-8598

« 18 » հոկտեմբերի 2022թ.

«ՄԱՅ ՊՐԻՆՏ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ
ԴԻԱՆՆԱ ԴԻԼԱՆՅԱՆԻՆ
Հասցե՝ ք. Երևան, Մ. Խորենացի 2 նրբ. 38տ.

Հարգելի տիկին Դիլանյան,

Հայտնում ենք, որ համաձայն Դատական դեպարտամենտի և Ձեր ընկերության միջև 2022 թվականի մարտի 16-ին կնքված թիվ ԴԴ-ԷԱՃԾՁԲ-22/02-1 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) N 2 հավելվածի՝ Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է, պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2022թ-ի դեկտեմբերի 20-ը: Ընդ որում, յուրաքանչյուր պատվերի կատարման համար վերջնաժամկետ է սահմանվում տվյալ պատվերի ձևավորման համար գրավոր ձևով հայտ ներկայացնելու օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ օրը, իսկ առաջին պատվերի դեպքում՝ 21-րդ օրացուցային օրը: Նշվածով պայմանավորված ապրիլ ամսից սկսած, արդենիսկ, Ձեզ գրավոր ներկայացվել են հայտեր, որոնց մասով անընդհատ Ձեր կողմից բանավոր ներկայացվել են տարբեր բնույթի պատճառաբանություններ՝ կատարման ժամկետների երկարաձգման մասով, որը մեր կողմից ընդառաջվել է: Հաշվի առնելով, որ Ձեր կողմից տվյալ չափաբաժնի մասով ընդհանրապես մատակարարումներ չեն իրականացվել, ուստի Դատական դեպարտամենտի կարիքների բավարարման ապահովման նպատակով 26.09.2022թ. թիվ ԴԴ-1-Ե-7901 գրությամբ (կցվում է) տեղեկացվել է Ձեզ, որ Պայմանագրով նախատեսված տպագրական և առաքման ծառայությունների 2-րդ չափաբաժնի մասով՝ ծառայությունները մատուցելու համար

տրվում է լրացուցիչ 10 աշխատանքնային օր՝ պայմանագրային պարտավորությունները կատարելու համար:

Ի պատասխան վերոնշյալ գրության Ձեր կողմից Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմին 06.10.2022թ. մուտքագրվել է արվել թիվ Մ-15649 գրությունը, ըստ որի, դուք պարտավորվում եք 5 աշխատանքային օրվա ընթացքում մատուցել Պայմանագրով նախատեսված ծառայությունները (ձևաթղթեր), սակայն մինչև 13.10.2022թ. ներառյալ չի մատուցվել:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև Պայմանագրի 2.1.3 կետի բ) ենթակետերի պահանջները՝ 18.10.2022թ. Պատվիրատուն միակողմանի մասնակի լուծում է վերոնշյալ Պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «ՄԱՅ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել՝ երեք հարյուր չորս հազար չորս հարյուր երեսուներկու (304432) ՀՀ դրամ՝ որպես տույժ Պայմանագրի 5.3 կետի համաձայն և քսանինը հազար վեց հարյուր վաթսունհինգ (29665) ՀՀ դրամ՝ որպես տուգանք Պայմանագրի 5.2 կետի համաձայն: Միաժամանակ տեղեկացվում է, որ Դատական դեպարտամենտը ձեռնարկում է Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից բխող միջոցներ. մասնավորապես՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին անհրաժեշտ է փոխանցել վեց հարյուր ինսունութ հազար հարյուր քառասուն (698140) ՀՀ դրամ՝ որպես պայմանագրի կատարման ապահովում և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին անհրաժեշտ է փոխանցել մեկ միլիոն քառասունյոթ հազար երկու հարյուր տասը (1047210) ՀՀ դրամ՝ որակավորման ապահովում:

Հարգանքով՝

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ՆԱԻՐԻ ԳԱԼՍՏՅԱՆ

Կատարող՝ Ա. Ասատրյան
Հեռ. 010511777